«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների տնօրինության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ՀՑ100-15/2-ՇՀԾՁԲ-11/2**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Մոսկովյան 33ա, 2-րդ հարկ, 01 սենյակ հասցեով, մինչև 2015թ. փետրվարի 20-ը, ժամը 14:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք.Երևան, Մոսկովյան 33ա, 2-րդ հարկ, 01 սենյակ հասցեում, 2015թ. փետրվարի 20-ին, ժամը 14:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների տնօրինության կարիքների համար՝ *Ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերումը:*

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների տնօրինության կարիքների համար՝ Ավիասպասարկման ծառայությունների մատուցման (որոնք կազմված են՝ 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2 ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "Հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների տնօրինության էլեկտրոնային փոստի հասցեն է՝ edvardgrigoryan@gmail.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք

© 2015 Directorate of the Armenian Genocide Centennial Events. All Rights Reserved.
33a Moskovyan str., 0002 Yerevan, Armenia. Tel.: +374 10 530062
URL: www.armeniangenocide100.org, e-mail: org@armeniangenocide100.org

է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների տնօրինության

գլխավոր տնօրեն՝ Ա. Ծատուրյան

Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2015 State Coordinating Committee of Armenian Genocide Centennial. All Rights Reserved.
URL: , e-mail: